

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌՈՐՅԱՆ

ԱՄԱՆՈՐՅԱ ՀԵՔԻԱԹԸ «ԱՐԵՎԻԿ»-ՈՒՄ



Անհիշելի ժամանակներից սիրված ու սպասված տոնը Ամանորը, մենք հայերս, նշել ենք մեծ որակությամբ ու հրաշքի սպասումով: Նավասարդ, Տարեմուտ, Տարեգլուխ, Գաղանդ, Լույի, Ամանոր, Նոր տարի:

դա չի խանգարել տոնն ընտանեկան ու ջերմ մթնոլորտում անցկացնելուն: Այո, փոխվել են ժամանակները, բայց հայ ազգը սիրով ու հավատարմությամբ պահել ու սերնդեսերունդ փոխանցել է իր ազգային ավանդույթներն ու սովորույթները:



դպրոցի «Արևիկ» խմբակի սաների մոտ: Ամանորյա տոնական սեղանը զարդարված էր բազմատեսակ ավանդական ուտեստներով քաղցրահամ զաթաներ, խաղողի թփով տոլմա ու տնական հավի, հայաստանյան արևաբույր մրգերից պատրաստված չիր ու ընկույզով շարոցներ, Արցախի զարդ ժինգյալով հաց, մերածոր փախլավա ու Նոր Նախիջևանի խոհանոցից ձալձու (կարնաշոռով, պանրով հաց) և բաղամեզե (թխվածքաբլիթ) ու էլի շատ համեղ բաներ:

գայինը, ավանդականը, մեր նախնիներինը: Ընտանեկան այս սիրելի տոնի անբաժան մասն է կազմում տոնական սեղանը, որի շուրջ անսպասման հավաքվում են մտերիմ ու հարազատ մարդիկ: Հնչում են բարեմատությանքեր, որոնք պիտի մեզ ուղեկցեն ողջ տարվա ընթացքում սեր, միասնություն, հավատարմություն, ներողամտություն: Ազգային բարիքներով լեցուն սեղանը մեզ ժպտում է իր անուշահամ ուտեստներով, որ պատրաստում են մեր մայրիկներն ու տատիկները: Ահա այսպիսի ջերմ ու ընտանեկան մթնոլորտ էր Դոնի Ռոստովի կիրակնօրյա

Բոլորն անհամբեր սպասում էին տարեհաց-զաթայի կտրելուն, որով որոշվում էր տարվա «հաջողակը»: Ահա, երկու հաջողակներ գտան իրենց «դուլվաթը» խորհրդանիշ — հաջողությունը: Երգ, պար, խաղեր, հյուրասիրություն, տոնական տրամադրություն ու լավագույն ուտեստի մրցանակաբաշխություն — սա էր դաս-միջոցառման նպատակը, որին սիրով մասնակցում էին ոչ միայն երեխաները, այլև ծնողներ, տատիկներ, ուսուցիչներ: Միջոցառման հյուրն էր Դոնի Ռոստովի երկարամյա մանկավարժ, գրող Ալեքսանդրա Սիմավոկյանը, ում ելույթն ու գեղեցիկ կատարումները սիրով ունկնդրեցին ներկաները: Օրն ամառանալի էր ու խորհրդանշական: Մի օր էլ օտար հողում զգացինք ու վայելեցինք մերը հայկականը, Հայաստանի շունչն ու ոգին:

Ծովինար ՄԱՐԳՍՅԱՆ,
ուսուցչուհի

ԻՍԿ ՆԱ ՀԱՎԱՏՈՒՄ ԷՐ, ՈՐ ԱՂԱՎՆԻՆԵՐԻ ՎՐԱ ԶԵՆ ԿՐԱԿՈՒՄ...

«Նախկինում ես էլ էի կարդում նրան, բայց ասում էի. «Մա ինձ չի վերաբերվում, որովհետև մաքուր հայ չեմ»: Հրանտ Դինքի մահը ստիպեց ինձ ամառ զգալ, որովհետև նա ինձ նմաններին մոքիլիզացնել ցանկացող մարդն էր: Ես միշտ խուսափել եմ հայկական համայնքից, որովհետև հայերեն չգիտեմ... Փոքր ժամանակ անունս լսելիս հարցնում էին թո՞ւրք չես: Միշտ կրկնում էի այն, ինչ մայրս էր սովորեցրել. «Ես հայ ծագումով թուրք եմ»: Հրանտ Դինքն ստիպեց աշխարհին բաց հայացքով նայել: Հրանտ Դինքից առաջ ես պարզապես հայկական ծագում ունեի, իսկ հիմա ես հայ եմ... Սկսել եմ հայերեն սովորել: Երբեք հայ տղայի հետ չեմ հանդիպել, Հրանտ Դինքից հետո Սերհատի հետ ծանոթացա: Նա խոսում էր Դինքի մասին, եւ այդ ամենն սկսվեց հայ լինելու հարցի շուրջ: Հրանտ Դինքը շատ կարեւոր է հորս եւ մորս համար: Նրանք շատ են փոխվել: Նրանց շատ էր զարմացրել «Բուրբուս հայ ենք» կարգախոսը: Նրանք դա համեմատում են իրենց անցյալի հետ եւ մտածում. «Մի թե սա հնարավոր է»: Առաջին անգամ խոստովանեցին. «Մենք փոխել ենք մեր ազգանունը, որ դու որեւէ խնդիր չունենաս...»: Հորս այքերն արցունքով են լցվում: Եվ նա նույնիսկ ասում է. «Կարծում ես պետք է վերականգնեմ մի ազգանունը...»:

Լեյլա ՆԵՑՋԻ



Ճիշտ տասնհինգ տարի առաջ այս օրը Ստամբուլի Երջիլ թաղամասում, իր խմբագրած «Ակոսի» խմբագրատան առաջ տասնյոթամյա մի թուրք լամուկի արձակած դավադիր կրակոցներից դադարեց բարբառել Մարգիս Ե. Գյուլվարդ ամուսինների Հրանտ Դինք գավակի խաղաղասեր ու մեծ սիրտը: Նրանք արմատներով Մայաթիայից էին եւ Ստամբուլ էին տեղափոխվել, երբ Հրանտը յոթ տարեկան էր: Ապագա մտավորականը հասակ էր առնելու Գետիկփաշա շրջանի հայկական մանկատանը, սովորելու էր Պեզդյան վարժարանում, ապա Մուրթ Խաչ դպրեվանքում, ավարտելու էր Ստամբուլի պետական համալսարանի կենսաբանության եւ փիլիսոփայության ֆակուլտետները, իսկ գինվորական ծառայությունից հետո աշխատելու էր որպես լրագրող: Ժամանակներ անց, նպատակ ունենալով բարձրաձայնելու թուրքահայության ծայրահեղ մեկուսացվածությունն ու դառնալու նրա իրավունքների պաշտպանը, հաշտարար օղակի դերակատարում ստանձնելով հայ եւ թուրք ժողովուրդների միջև 1996 թ. ստեղծում է «Ակոս» երկլեզվյա հայերեն եւ թուրքերեն թերթը: Զնայած այն իրողությանը, որ հաջորդաբար սպառնալիքներ էր ստանալու այս երկրում ազատորեն գործող ազգայնական խմբավորումներից, միեւնույն է, արհամարհելով այդ ամենը բարձրաձայնելու

էր իր մտահոգությունները տեղի հայության վիճակի մասին, ժողովրդական տարբեր հարթակներում ու կազմակերպություններում էլույթներ ունենալով ընդգծելու էր Թուրքիայի ժողովրդավարացման, խոսքի ազատության, ազգային փոքրամասնությունների իրավունքների, մանավանդ հայ համայնքի իրավունքների հարցը: Իսկ Հայոց ցեղասպանության խնդրում բացահայտորեն հակադրվելով թուրքական անմեղատույն ձեռնարկ այն պնդումներին, թե 1915-ին տեղի ունեցածը պատերազմական իրադարձությունների ու բախումների հետևանք է եղել եւ ոչ նպատակային կոտորած, Դինքը ենթարկվելու էր բացահայտ հայաճանաչների եւ 2005-ին վեցամյա պայմանական բանտարկության դատապարտվելու: «Կան թուրքեր, ովքեր չեն ընդունում, որ իրենց նախնիները ցեղասպանություն են գործել, - գրելու էր ըմբոստ, բայց ես խաղաղասեր խմբագիրը: - Եթե նայենք, կհասկանանք, որ այդ մարդիկ ուղղակի բարի-հաճելի մարդկանց տպավորություն են թողնում... Բայց, ամեն դեպքում, ինչու նրանք չեն կարողանում ընդունել ցեղասպանությունը: Որովհետև նրանք կարծում են, որ ցեղասպանությունը վատ բան է, որ նրանք երբեք չեն ցանկանա անել դա, եւ այդ իսկ պատճառով չեն կարողանում հավատալ, որ իրենց նախնիները կարող էին կատարել նման բան...»: Հասկանալով, որ կարելի ցանք չի փոխում ցեղասպանության հարցը, նա կոչ էր անում երկխոսության. «Հայ-թուրքական հարաբերություններն անհրաժեշտ է դուրս բերել 1915 մեար խորություն ունեցող օրհորից...»: Անկախ հանուն հաշտեցման ու համատեղ խաղաղ գոյակցության իր գործադրած ջանքերից, հրազենային «յաթաղանի» գոհ էր դառնալու հիսուներեքամյա գործիչը, որ համոզված էր, թե «չեն կրակում աղավնիների վրա»: Բայց կրակեցին: Եվ այդ կրակոցների արձագանքը լավեց աշխարհով մեկ: Թուրքահայ ճանաչված բանաստեղծ Ջահրատը գրեց. «Աղավնիներ համոզեցին, որ իրենց վրա չեն կրակեր. Հրանտ Դինք հավատաց: Թեպետ երկչուտ հավատաց, թե ինք աղավնի մըն է: Բայց կրակեցին: Նախատեսված էր. մեկ քանի տարի առաջ ըսած էր ինձի. «Իմ մահը պիտի ըլլա ոտքի վրա կանգնած, ոչ թե պտուկած անկողնի մեջ...»: Թող պատկի լույսերու մեջ: Եթե մեզի հարցնեք ան միշտ հաղթական պիտի կանգնի անաղարտ արձանի մը պես...»: Մյուս կողմից... Հազարավոր մարդիկ դուրս եկան փողոցներ «Ես հայ եմ, ես Հրանտ Դինք եմ» պատասխանելով: Սպանությունը դատապարտող հայտարարությամբ հանդես եկավ նույն Թուրքիայի վարչապետը: Այս երկրի մարդու իրավունքների պաշտպանության կազմակերպությունն էլ Խոս-

քի եւ խղճի ազատության ամենամյա մրցանակի արժանացրեց նրան: Գերմանիայի «Շտեթն» ամսաթերթի հիմնադիր Հենրի Նանենի Մամուլի ազատության եւ լրագրողական խիզախության, Նորվեգիայի Մարգու իրավունքների պաշտպանության Բյոռնսի անվան, նաեւ Հայաստանի նախագահի ու այլ մրցանակներ էլ շնորհվեցին «Ակոսի» նախատեսված խմբագրին: «Ընդհանրապես չեմ հիշում Հրանտի հետ երբ եմ ծանոթացել, կարծես նա միշտ կար, - գրելու էր թուրք ազնվամյա գրող Ֆեթիհե Զեթինը: - Ծատ ժողովների ժամանակ եմ հետեւել նրան: Միշտ նկատել եմ այքերի խոնավությունը, նա էլ միշտ իմ զգացմունքայնությունն է նկատել: Չայրույթս է նկատել: Երբեմն ինձ ասում էր հանդարտվիր: Հրանտին հետեւելիս տեսնում էի, թե ինչպես էր ներքուստ միշտ արյտասվում: Անհավատալի մարդ էր: Այսքան անդրադառնալ սարածներին... Ինչպես անդրադառնալ սարածներին... Ինչպես անդրադառնալ սարածներին... Ոչ այս ամենի վրա հիմնած ազգայնականությունն ունեցավ, ոչ էլ դիմացինի հանդեպ թշնամություն: Դրա համար պետք է Հրանտին հասկանալ ինչ էր ուզում...»: Իսկ նա հավատում էր, որ աղավնիների վրա չէ ն կրակում...